

ՔԱՐՈՉԽՕՍԱԿԱՆ



Տ. ՏԱԹԵԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԱԿՈԲԵԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՕՍՈՒԱԾ Ս. ԷԶՄԻԱՍՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
Ն.Ա.Օ.Տ.Տ ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԳԱՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ 19-ՐԴ ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

(4 նոյեմբերի 2018 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն

«Օրինա՛կ եղի՛ր հաւատացեալներուն խօսով,
վարմունքով, սիրով, հաւատքով»
(Ա. Տիմ. Դ. 12):

ՍՈՒՐԲ գրային այս խօսքերն այսօր առաւել քան երբեք արդիական են, քանզի համախմբուած ենք միասնաբար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի մէջ՝ տօնակատարելու Հայոց Հայրապետական Աթոռի 132-րդ գահակալի՝ Նորին Սրբութիւն Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալութեան 19-րդ տարեդարձը:

Մեծապէս ուրախ ենք եւ միեւնոյն ժամանակ հպարտ, որ ականատեսն ու մասնակիցն ենք Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ պատմութեան փառաւոր էջերէն մէկուն կերտման՝ անցեալի արժեւորմամբ, ներկայի ազգաշէն գործերով եւ լուսաւոր ապագայի տեսլականով: Յիրաւի Ձերդ Սրբութեան գահակալութեան 19 տարիներուն ընթացքին Հայ Եկեղեցին ապրեցաւ հոգևոր վերածնունդի ու զարթօնքի շրջան, բարգաւաճման ու բարեփոխումներու շրջան՝ շնորհիւ Ձերդ Սրբութեան կողմէ ներդրած ջանքերուն եւ հետևողական ու նուիրեալ աշխատանքին: Անցնող 19 տարիները Հայ Եկեղեցւոյ համար եղան զօրացման, բարեկարգման, եկեղեցաշինութեան տարիներ՝ առաւել ճանաչելի դարձնելով Հայ Եկեղեցին միջազգային եւ համաշխարհային հասարակութիւններու եւ կրօնական

ու աշխարհիկ կառույցներու առջև: Անցնող 19 տարիները եղան ոչ միայն տեսանելի, քարակերտ եկեղեցաշինութեան տարիներ, որ շատ յաճախ կը շեշտուի եւ երբեմն ալ կը շահարկուի, այլև անտեսանելի՝ մարդկային հոգիէն եւ մտքէն ներս հոգևոր տաճարներու շինութեան տարիներ, անձնուէր ծառայութեան ու նուիրումի տարիներ՝ որպէս օրինակ եւ ներշնչումի աղբիւր հանդիսանալով Հայ Եկեղեցւոյ հոգևոր դասի եւ մեր հաւատաւոր զաւակներուն համար՝ «խօսքով, վարմունքով, սիրով, հաւատքով» (Ա. Տիմ. Դ. 12), ինչպէս կըսէ Պօղոս առաքեալը:

Թէեւ անհնար է մէկ խօսքի մէջ ամփոփել 19 տարիներու հսկայածաւալ աշխատանքը, մանաւանդ, երբ Հայրապետական առաքելութիւնը իրականացուած է բազմաթիւ ուղղութիւններով, բայց միեւնոյն ժամանակ անկարող ենք չտրուիլ գոնէ քանի մը կարևոր ոլորտներու գործունէութիւնը հպանցիկ ներկայացնելու գալթակղութեան:

Գարեգին Բ. Հայրապետի գահակալութեան օրօք բարգաւաճում եւ յառաջընթաց ապրեցան Հայոց Եկեղեցւոյ հոգևոր-կրթական հաստատութիւնները, գործողներու կողքին կառուցուեցան նորերը եւ նոր աստիճանի բարձրացուեցաւ կրթութեան մակարդակը: Հիմնուեցաւ Սևանի Վազգէնեան հոգևոր դպրանոցը, Հառիճի Թրբանճեան ընծայարանը (աւագ դպրոցը), Աստուածաբանական բաժանմունքը նոր բարձունքներ նուաճեց, բացուեցան Հայորդաց տուններ Երևանի եւ մարզերու մէջ, ուր կը յաճախեն եւ հայեցի դաստիարակութիւն կը ստանան մօտ հինգ հազար երեխաներ, հանրակրթական դպրոցներու մէջ սկսաւ ուսուցանուիլ Հայ Եկեղեցւոյ պատմութիւն առարկան՝ յատուկ այդ առթիւ ստեղծուած դասագիրքերով, Ս. Էջմիածինի մէջ կառուցուեցան Էօրնէկեան հանրակրթական դպրոցը, Գարեգին Ա. հայագիտական եւ հոգևոր դաստիարակութեան կեդրոնը, Վաչէ եւ Թամար Մանուկեան մատենադարանը:

Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետի գահակալութեան օրօք, Նորին Սրբութեան անմիջական տնօրինութեամբ ու օրհնութեամբ սկսան լայնօրէն իրականացուիլ հսկայածաւալ ընկերային ծրագիրներ, վերաբացուեցան ու բացուեցան բարեգործական ճաշարաններ, Երևանի մէջ բացուեցաւ երեխաներու խնամքի կեդրոն, բանտերու հոգևոր ծառայութեան հետ մէկտեղ սկսաւ իրականացուիլ կալանաւորներու ընտանիքներու աջակցութեան ծրագիրը, 2008 թուականէն «Կառուցենք հաւատով» ծրագիրին միջոցով Հայաստանի տարբեր մարզերու մէջ կառուցուեցան հարիւրէ աւելի բնակարաններ, այսօր հոգևորականներն իրենց ծառայութիւնը կը բերեն հիւանդանոցներու, զօրամասերու, բանտերու,

ծերանոցներու, բարձրագոյն ուսումնական հաստատութիւններու, դպրոցներու ու մանկապարտէզներու մէջ՝ ամենուրէք իրականացնելով տարատեսակ ձեռնարկներ եւ բազմաբնոյթ ծրագիրներ:

Ամենայն Հայոց Հայրապետի գահակալութեան 19 տարիներն առանձնացան Հայոց Եկեղեցւոյ կառավարման ոլորտին մէջ արձանագրուած յաջողութիւններով: Վեցդարեայ ընդմիջումէ ետք գումարուեցաւ Հայոց Եկեղեցւոյ եպիսկոպոսաց ժողովը, կեանքի կոչուեցաւ Եկեղեցական ներկայացուցչական ժողովը՝ կազմուած հոգևոր դասէ եւ Նուիրապետական Աթոռներու ու թեմերու պատուիրակներէ: Ստեղծուեցաւ Հայեցակարգային հիմնադրոյթներու գրասենեակը, ստեղծուեցան նոր թեմեր, ձեռնադրուեցան երեք հարիւրէ աւելի եկեղեցականներ:

Յիրաւի անկարող ենք 15-20 վայրկեանի ընթացքին ըստ արժանւոյն ներկայացնել շուրջ երկու տասնամեակներու ընթացքին իրականացուած եկեղեցանուէր գործունէութեան բոլոր ուղղութիւնները: Սակայն մէկ բան կրնանք վստահաբար փաստել ու արձանագրել, որ հակառակ բազում դժուարութիւններուն, Նորին Սրբութիւն Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետութեան արդիւնքով, հակառակ բազում արգելքներու ու խոչընդոտներու, կամօքն Աստուծոյ մեր Եկեղեցին կը զօրանայ եւ կը շէնանայ, կը զօրանայ նոր եւ կրթեալ սպասաւորներով, նորոգուող եւ կառուցուող սրբավայրերով, կը զօրանայ նոր սերունդին մէջ ազգային արժէքներու սերմանմամբ, հաւատքի աճով ու նուիրումով:

Կրնանք փաստել նաեւ, որ շատ անգամ վերոնշեալ խոչընդոտներն ու դժուարութիւններն արհեստածին են եւ երբեմն յատուկ դիտաւորութեամբ: Այսօր ալ, ինչպէս անցնող 1700 տարիներուն ընթացքին, փորձ կըլլայ պայքարելու Սրբազան կառոյցի մը դէմ, որ Քրիստոսահաստատ է, դարերու բովով ու բազում փորձութիւններու միջով անցած, թրծուած, հայ ժողովուրդին հայրաբար իր թևերուն տակ առած եւ սնած, բազմիցս վիրաւորուած, բայց կրկին վերածնուած ու զարթօնք ապրած՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցւոյ եւ իր ազգընտիր Գահակալին դէմ: Այո՛, իրապէս զարթօնք ապրած, զարթօնք, որ նոյնիսկ անգէն աչքով նկատելի է եւ անվիճելի յատկապէս վերջին երկու տասնամեակներուն ընթացքին, երբ Հայոց Եկեղեցւոյ գահին բազմած է 132-րդ Հովուապետը: Բոլոր ժամանակներուն Հայոց Եկեղեցւոյ Սրբազան Անդաստանէն ներս եւ հայ ժողովուրդի կեանքին մէջ եղած են խնդիրներ, մարտահրաւէրներ, որոնք ժամանակի հայրապետներու, եպիսկոպոսաց, քահանայից եւ Եկեղեցւոյ, ազգի խնդիրներով մտահոգ անհատականութիւններու իմաստութեան եւ մտածուած գործողութիւններու



«Յիրաի Զեղ Արքուիթեան գահակալութեան 19 տարիներուն ընթացքին Հայ եկեղեցին ապրեցաւ հոգևոր վերածնունդի ու զարթոնքի շրջան, բարգաւաճման ու բարեփոխումներու շրջան՝ շնորհիւ Զեղ Արքուիթեան կողմէ ներդրած ցանձերուն եւ հետևողական ու նուիրեալ աշխատանքին»:

շնորհիւ փառահեղ լուծումներ ստացած են եւ իբրեւ Ազգ եւ Եկեղեցի մենք շարունակած ենք ապրիլ ու Բարգաւաճիլ պատուով:

Այդպէս է նաեւ այսօր: Անցեալի պէս այսօր ալ մեր ժողովուրդին, Մայր Հայրենիքին եւ Մայր Եկեղեցւոյ առջև ծանրացած են բազմաթիւ դժուարութիւններ ու մարտահրաւէրներ: Զանազան միջոցներով փորձ կըլլայ խարխիւել ու սասանել Հայ Եկեղեցւոյ հիմքերն ու հեղինակազրկել զայն, տարատեսակ զրպարտութիւններու ու կեղծիքի տարածումով պառակտում յառաջացնել հայ ժողովուրդին մէջ, ամենուրեք կը քարոզուի ալլախերուածութիւն ու անբարոյականութիւն: Նպատակը մէկն է՝ թուլացնելով Եկեղեցին ու հարուածելով Իր Գահակալին՝ հարուածել ու ծունկի բերել հայ ժողովուրդն ու քրիստոնէական համայնքները, սակայն, Պօղոս առաքեալի խօսքին համաձայն, «Եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ կրնայ մեզի հակառակ ըլլալ» (Հռոմ. Ը. 31):

Վեհափա՛ռ Տէր, իբրեւ Հայոց Հայրապետ, Դուք Ձեր իմաստութեամբ, աշխատասիրութեամբ ու խոնարհութեամբ բոլորիս ցոյց կու տաք ինչպէս յաղթահարել այդ մարտահրաւէրները՝ Հայ Եկեղեցին առաջնորդելով առաւել զօրացման: Իբրեւ քաջ հովիւ եւ իմաստուն առաջնորդ ունենալով Ձերդ Սրբութեան, Հայոց Եկեղեցին եւ հայ հոգեւորականութիւնն այսօր կը շարունակեն իրենց առաքելութիւնը, որ եղած է եւ կայ Տիրոջ փրկարար խօսքի քարոզչութիւնը եւ լոյսի տարածումը, ազգային ու քրիստոնէական բարոյական արժէքներու պահպանումն ու տարածումը: Այսօր բոլորիս սրբազան պարտականութիւնն է որդիաբար հոգ տանիլ Մայր Եկեղեցւոյ, Հայոց Հայրապետին եւ Մեր բոլոր սրբութիւններուն համար՝ թոյլ չտալով պղծել Մեր սրբազան հաւատքի դարաւոր վկայութիւնները:

Վեհափա՛ռ Տէր, Ձեր գահակալութեան 19-րդ տարեդարձին առիթով թոյլ տուէք ողջ միաբանութեան, հայ ժողովուրդի աշխարհասփիւռ զաւակներու եւ բոլոր ներկաներու անունով շնորհաւորել Ձերդ Սրբութիւնը: Թո՛ղ Աստուած անսասան պահէ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, երկար քաջառողջ տարիներ շնորհէ Ձերդ Սրբութեան՝ պարգևելով մեր հաւատաւոր զաւակներուն առաջնորդելու ուժ, անսպառ եռանդ եւ Բարձրեալի օժանդակութիւնը Ձեր բոլոր ազգաշէն եւ եկեղեցաշէն ծրագիրներու իրագործման համար՝ յանուն մեր ժողովուրդի եւ ի պայծառութիւն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեանս. ամէն: